

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ

Ծնորհակալութեամբ ստացանք պ ժ. Մուրիէլ
Փրանսերէն լեզուով պատկերազրդ գրուածքը
«La Bibliotheque d'Edschmiadzine et les Manu-
scrits Armeniens» յար. J. Mourier. (Եջմիածնի
գրադարանը և հայոց ձեռագիրներ): Տպված է
Թիֆլսում (in folio) Մէլիքօվի տպարանում,
1885 թւին: Այդ գրուածքը թարգմանական հա-
մառօտութիւն է հանգուցեալ ուստ հնագէտ կոմս
Ռվացրօվի գրուածքի Եջմիածնի ձեռագիրների մա-
սին: «Արձագանք» շաբաթաթերթը խօսելով այդ
տեսրակի մասին, աւելացնում է որ այդ մեծա-
դիր տեսրակից ընթերցողը տեղեկանում է, թէ
մի ձեռագրի, օրինակ մի աւետարանի, օրինակե-
լու կամ արտագրելու տեղը ուր է, ժամանակը
երբ է գրվել, գրողի անունը, շատ անգամ գրել
տուողինը, նոյնպէս ումն է նուկրիւած կամ որ
վանքին, ինչ նիւթի վրա, մագաղաթի թէ թղթի

վրա է օրինակված ձեռագիրը և այլն: Ձեռագիր-ների դիրքը, նրանց տառերի տեսակները, տա-ռանկարները, գլւագիրները, զարդերը, սիմսանիշ-ները, կամարակապ մանրանկարները, մի որոշ գաղափար են տալիս հայոց պատկերագրութեան, հնագրութեան և ճարտարապետութեան պատմութեան մասին: Այդ բոլորը անչուշտ գիտնական մեծ նշանակութիւն ունի Հայաստանի ընդհանուր պատմութեան համար: Չը նայելով բիւզանդական ազդեցութեան, դարձեալ հայկական գեղարտեատը միշտ իր ինքնուրոյն, անկախ բնաւորութիւն է ունեցել և պահել է իր մէջ: Այս տեսրակում ամենից նշանաւորն է, մանաւանդ Խջմիածնի գրադարանի ամենաթանգարին աւետարանի կազմի լուսանկարը, որ առաջին անգամ լրյու է հանվում պ. Մուրիկի ձեռքով: Փղոսկրից շնած կաղմը սքանչելի կերպով է քանդակված: Պ Մուրիկ խօսելով յիշեալ փղոսկրի կազմի վրա քանդակած նկարի մասին, համամատում է նրան Հռոմի Վատիկանի պալատում գտնված մի աւետարանի նոյնանման կազմի հետ: Շաբաթաթերթը վերջացնում է ասելով, որ պ. Մուրիկի տեսրակո առանձին ուշադրութեան արժանի է, մանաւանդ մասնագէտների համար, որի ապացոյց կարող է լինել ֆարիփ «Աքսելեան լեզուների» ճեմարանի վերատեսչի գրած նամակը պ. Մուրիկին, որով նա շընորհաւորում է հեղինակին այդ տեսակ օգտակար հրատարակութեան համար:

«Կավկազ» լրագրում կարդում ենք: «Դեկտեմբերի 16-ին Օդէսայի զինուորական դատարանը դատապարտեց մահվան պատժի, այն է կախաղանի, Պետերբուրգի նախկին ուսանողին, ազնուական Մանուչար օվկին, որ մեղադրվում էր քաղաքական յանցանքում: Այդ դատավճիռը ներ-

զովրդական ուսմամբ հետաքրքրվողը և այդ ուսման կանոնաւոր և խելացի կազմակերպութեան գնահատողը իրաւամբ կարող է ասել թէ ամբողջ Նվեցարիան մի դպրոց է:

ատենք, ասցնելով քաղաքի փողոցներով, դուք ապատճառ համոզմունք կը կագմէք, թէ ամբողջ քաղաքը ապրում է երեխաների համար, թէ հասակ առած մարդկութիւնը ապրում է միմիայն փոքր սերունդի համար: Ձեր առջև տեսնում էք դպրոց, աջ կողմը տեսնում էք դպրոց, ձախ կողմը դպրոց: Փողոցները վելթում են երկու սեռի մասնակներով, որոնք խումբ խումբ, տետրակիները կուան տակ, գրքերը մէջքի վրա փարփիկ կապոցով պնդացրած, — կամ դպրոց են գնում, կամ դպրոցից գերազառնում: Ահա, դպրոցի գավիթում երեխաների ահազին խումբը ուրախ և բարձր ձայներ արձակելով խաղում, վազվառում է ազատ կերպով առանց որ և է վերակացուի կամ վարժուհու վերահսկողութեան. ահա մանուկների մի այլ խումբ խաղում է փողոցի մէջ տեղում, կամ հրապարակում և հասակ առած անշնորներից իրաքանչիւրը, կին թէ մարդ, իր պարտաւորութիւն է համարում կանգ առնել մի վայրկեան, հայրենիքի նոր սերունդի այդ թարմ, զուարթ և առողջ փոքրիկ ներկայացուցիչների առջև, բաղդասոր և հըպարտ ժաման երեսին զմայլվելով հարենիքի ապագայ յոյսը կազմող մանուկների անմեղ, ազատ և ազմկալի խաղերի աեսարանով:

կայացվեցաւ Օդէսայի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի վաւերացմանը, որ իր կողմից ներկայացրեց այդ գատակինուը բարձրագոյն հայեցադոթեանը, խնդրելով մեղմացնել Մանուչարօվին նշանակված պատիժը։ Այժմ Օդէսայի «Նովօրօս. Տելեգրաֆ» լրազնիքը հաղորդում է որ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել մեղմացնել պատիժը, փոխելով մահվան պատիժը տաս տարվայ տափանակիո այսաւանդուի։»

Ծնորհակալութեամբ ստացանք պ. Գ. Տէր-Պետրոսեանցի տպված զեկուցումը ռուսերէն լեզուով, որ նա կարդացել է նոյեմբերի 16-ին Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան արտակարգ նիւթառմ և որ կրում է հետևեալ վերնագիրը «Ալեքսանդրապոլի գաւառի, Շօրադէալի բաժնի մի քանի գիւղերի շինականների աղքատութեան պատճառները և նրանց բարօրութիւնը բարձրացնելու միջոցները»։ Այդ հետաքրքիր գրուածքը ուսումնասիրելուց յետոյ յոյս ունենք ծանօթացնել «Մըշակի» ընթերցողներին պ. Տէր-Պետրոսեանցի գեկուցման հետ:

ԱԽԱԼԾԻՄԱՅԻՑ մեղ գրաւմ են: «Ձեր լրագրի № 5 մէջ զետեղված այն լուրը, որ իբր թէ Ս. Պետրոսուրդի հայերը հրաւիրում են քարոզչի պաշտօնով հայր Խորէն Ստեփանէխին, մեղ ամենքիս տիրութիւն և ցաւ պատճառեց, մտածելով թէ մի գուցէ իրադործի այդ լուրը: Հայր Խորէնը իմացաւ ամբողջ Ախալցիսայի և Ախալքալաքի գաւառներում գրաւել մեր ամենիս սէրը և ցատ ծանր

ՍՂ ՆԱԽԻՑ մեղ համար նրանից բաժանվելը»

տեղիս կլուրի տաս տարվայ յօթելեանն էինք կատա-
րում: Կլուրի դահլիճը օրվայ նշանակութեանը պատ-
շաճաւոր կերպով զարդարված էր: Ժամի 21/2-ին
կլուրի դահլիճը լցվեցաւ բազմութեամբ: Բացի
անդամներից, հրաւիրված էին տեղիս գաւառա-
պետը, նրա օգնականը և մի քանի պաշտօնեայ-
ներ, նաև երկու քահանաներ, մինը ռուսաց և մինը
հայոց, որոնք գոհացողական մաղթանք կատարե-
ցին: Տօնի ժամանակ կենացներ առաջարկվեցան
Խազար և Կայսուրի: Ըստ կայսուրի տասն, նախկին
փոխարքայ Միքայէլ Նիկոլայեվիչի, կովկասեան
կառավարչապետ Դմիտրիովիչ-Կորսակովի և Թիֆ-
լիսի նահանգապետի: Նոյն օրը երեկոյեան ճրա-
գալոց էր: Ամբողջ թաղը լուսաւորված էր կրակ-
ներով: Զանազան քաղաքներից ստացվեցան յօթե-
լեանի առիթով Հնորհաւարական հեռագիրներ: տօ-

կազմուածքով ու մաքուր տեսքով, իրանց ազատ ու համարձակ, բայց մի և նոյն ժամանակ սիրավը ու քաղաքավարի վարմօնքով հասակ. առածներ ճետ, մերս մէնց անուանութեան

ինձ պատահել է շատ անգամ քաղաքում շրջելս դիմել փոքրիկ մանուկներին, տղաներին թէ աղջիկներին, ճանապարհը հարցնելու համար, — և երեխաները անմիջապէս թողնելով իրանց խաղը, միրափր կերպով շրջապատելով ինձ, համարձակ, աղատ, քաղաքավարի և շատ հասկանալի կերպով բացատրութիւն էին տալիս ինձ այն ճանապարհի մասին, որով ես պէտք է գնայի: Նվելցարական դպրոցը աշխատում է զարգացնել իր աների մէջ ուրախ և գուարթ տրամադրութիւն, աղատ և համարձակ ոգի, միացրած վերին ասափճանի մարդավայել և միրափր վարմէնքի հետ: Դպրոցը միծ ուշադրութիւն է դարձնում մանուկների, Փիգիկական զարգացման վրա, մարժենելով թէ

աղջկերանց և թէ աղաներին մարմնամարդութեան, այլ և այլ խելացի խաղերի, երգեցողութեան, երկար զօսանիքներ անելու և հրացանաձգութեան մէջ: Այն, շատ և շատ վստահ աղբիւներից ես աեղեկացայ, որ ընտանիքներից շատերը նայն խոկ աղջկերանց էլ վարժեցնում են հրացանաձգութեան մէջ: Շվեյցարացի մանուկների հեա թէ դպրոցում, թէ ընտանիքում և թէ փողսցում ծանօթանալավ, գուք այն ապաւորութիւնն էք դուրս ընթառում, որ նրանց անյացտ է որ և է բարյական կամ մտաւոր ճնշում թէ ընտանիքում և թէ զբա-

տեղիս քննիչ պ. Ստեփան Մէլիք-Նուբարեանցի
հառաջ և Եղիշէ քահանայ Տէր-Աստուածարեանի
ատենախօսութիւնը: Գիշերվայ ժամը 9-ին հան-
դիսականները ցրուեցան իրանց աները ուրախ
տրամադրութեամբ:»

Մեզ հաղորդում են ԲԱԹՈՒՄԻՑ հետևեալը:
«Նորերումս բացվեցաւ այստեղ հայ-կաթօլիկոսութիւնների
եկեղեցին: Եկեղեցու շինութիւնը պարզ, բայց բա-
ւական ընդարձակ է, թէև դեռ ես արտաքուստ
կատարելապէս վերջացրած չէ:»

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են: «Վերջին ժամանակներս բարում քաղաքը դարձել է Անդրկովկասեան երկրի համար մի ընդհանուր կենտրոնատեղի հայահատիկների վաճառման: Երկաթուղին ամեն օր թափում է տեղս ահազին քանակութեամբ ցորեն, որ անյապաղ գնվում և վաճառահանվում է Եւրոպա, զլասարապէս Թիգրիս, Յունաստան և Ֆրանսիա: Ցորենի գները հասել են մինչև 97—98 կոտկալու»:

У. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ մեր թղթակցու մեզ գրում է:
«Եղել եմ մի քանի անգամ Ա. Պետերբուրգի
Соляной Городокъ ասված տեղում, որտեղ հրա-
պարակական դասախոսութիւններ են կարդայ-
վում ժողովրդի, գլխաւորապէս միջնն և ստորևն
դասակարգի համար։ Այդաել ինձ տուեցին մի
գրքոյկ «Десятилѣтие народныхъ чтеній» Վեր-
նագրով։ Լուսաւորութեան մինիստրութեան մէջ
գոյութիւն ունի մի յանձնաժողով, որի գրադ-

մունքները միայն այդ օրինակ ընթերցանութիւն-ներով են սահմանափակվում։ Մայրաքաղաքումս միայն այդ յանձնաժողովից են թոյլտութիւն ստա-նում ժողովրդի համար դասախոսուղները։ Այդ յանձնաժողովը գեռ մշակում է նոր կանոններ վերոյիշեալ ընթերցանութիւնների համար։ Այդ տեսակ ընթերցանութիւններ, որքան իմացայ, կա-րող են տեղի ունենալ միայն կայսերութեան մայ-րաքաղաքներում և նահանգական քաղաքներում, բայց ոչ երբէք գաւառականներում։ Նահանգա-կան քաղաքներում այդպիսի ընթերցանութիւն-ների ծեռնարկելիս պիտի դիմել տեղային ուսում-նարանական հոգաբարձուին ու նրանցից թոյլտու-թիւն ստանալու։ Ինձ խստացան տալ մինչև օրս «Սօլիանոյ Գօրոդոկ» ասված տեղում կարդացված ժողովրդական դասախոսութիւնների ցուցակը։ Կայ նոյնպէս «Պատասխանութիւնների մի ժողովա-ծու»։ (Сборникъ чтеший) որ ծախվում է Սօլիանոյ Գօրոդոկի Մանկավարժական Մուզեումի մէջ։ Գիրքը պատկերագրու է։ Այդ ընթերցանութիւն-

բոցում: Բայց այդ բոլոր յատկութիւնների հետ
միասին, որոնք հետևանք են ազատ և խելացի
գաստիարակութեան, դուք կը գտնէք վիշյարա-
ցու մէջ, իր ամենափոքրիկ հասակից, գործնական
ոգու զարգացման ամենահաստատ նշոյները:

մի եօթ, կամ շատ-շատ ուժ տարեկան տղային, բաւական աղքատ, բայց մաքուր կերպով հագնված, որ բաղրբելէնների խանութիւ առջև կանդնած, մեծ ակնկալութեամբ էր նայում խանութիւ պատուհանի վրա դարսած ամեն տեսակ անուշահամ առարկաների վրա։ Ես մօտեցայ նրան և հանելով գրալանից մի 20 սահնտիմ (5 կօպէկ) ընծայեցի նրան, հարցնելով նրան մի և նոյն ժամանակ թէ իր ակնկալած քաղցրելէններից ո՞րը նա ախտի առնի այդ իր ձեռք քերած փսղով։ Մասնուկը փողը ընդունելով և քաղաքավարի կերպով չորհակալութիւն յայննեղով ինձ, զբեց իր ստացած 20 սահնտիմը իր գրանի մէջ և շատ ծանր մեռած առանձինութեանից ենձ։

«Nein, ich werde nichts kaufen, ich werde das Geld sparen» (աչ, ես ոչինչ չեմ առնի, ես այդ վողը կը խնայեմ, յետ կը գցեմ): Այդ հասակից մանուկը սովորում է արդէն խնայել և յետ գցել: Այդ խնայողական, գործնական ոգին ամենափոքր հասակից նրա մէջ խոր արմատներ է գցել իրան շրջապատող հասարակական խնայող և աշխատասեր շրջանի ներդործութեան տակ:

բող տիկին Շպակօվսկուց։ Ներկայ փօստով ու-
զարկում եմ ձեր խմբագրութեանը երկու գլուխ-
ներ։ 1) Первое десятилѣтіе членій для народа
и солдатъ (տպված է 1882թվն) և 2) Сводъ
главнейшихъ законопол. и распоряж. о началь-
ныхъ народныхъ училищахъ (տպված է 1883
թվն):»

ԵՐԵՒԱՆԻ մեր թղթակիցը գրում է մեզ: «Նա-
հանգի անտեսական դրութիւնը շատ աննախան-
ձելի է, առևտուրն էլ քանի գնում է սաստիկ ընկ-
նում է: Շատ վաճառականներ վերջին ճիգն են
թափում օրական հայր աշխատելու. բայց այդ
էլ դժուար է լինում: Լսում ենք որ կառավարու-
թիւնը դիտարութիւն ունի բանալ Երևանի նա-
հանգում մի քանի գիւղատնտեսական ուսումնա-
րաններ: Դա, ի հարկ է, ուրախալի է, քանի որ
գիւղատնտեսական գլարոցներ մեծ դեր կարող էին
խաղալ Երևաննեան նահանգի պէս մի հարուստ,
արդիւնաբերող նահանգում և նրան լաւ ապադայ
խոստանալ»:

Վաղը, կիրակի, յունվարի 26-ին կինքից Սամօլովիչի ինիցիատիվով արվելու է Թիֆլիսի Կրուժոկի գահիներում պարահանդէս յօդուա Ա. Պետերբուրգի կանանց բժշկական կուրսերի: «Հաւաքած» լրագիրը լսել է որ այդ պարահանդէսի կազմվելուն իր ջերմ աջակցութիւնը խոստացել է կովկասեան կառավարչապետի կինը, Ե. Բ. Շերեմետեավա: Յոյս ունենք որ Թիֆլիսի հասարակութիւնը համակրութեամբ կը վերաբերվի դէպի այդ պարահանդէսը, աշքի առնելով այն օգտաէտ գործը, որի նպատակով նա տրվում է, այն է միջոց տալ կանանց սեռին ունենալ իրանց համար բժշկական բարձրագոյն դպրոց Ռուսաստանում: Խնչակս յայտնի է Ս. Պետերբուրգի կանանց բժշկական կուրսերը փակվելու վրա են նիւթական միջոցների պակասութեան պատճառով և այժմ ամբողջ Ռուսաստանում, և մանաւանդ մայրաքաղաքներում, հանգանակութիւններ են անում այդ օգտաէտ հիմնարկութիւնը պահպանելու համար: Յոյս ունենք որ Թիֆլիսի հասարակութիւնը մեծ թուլ կը ներկայանայ էգուցվայ պարահանդիվին, և այդպիսով ցոյց կը տայ որ Թիֆլիսն էլ յնտ չեմում այն ընդհանուր համակրութեան մէջ դէպի կանանց բժշկական ուսումը, որ ցոյց է տալիս այժմ ամբողջ Ռուսաստանի հասարակաց կարծիքը: Մուտքը արժէ 2 րուբլ և տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ բժիշկ Պավլովսկու բժշկանում, Շավերդովի գործակալութեան մէջ և կրուժոկի մէջ:

Յունվարի 21-ին՝ աւատօտեան 10 ժամին, թիֆ-լիսի «Գորդիա» անուանված հիգանոցում անձնասպանութիւն գործեց 26 տարեկան հայ երիտասարդ Յավշէփ Տէր-Մովսէսեանց։ Հանգուցեալը շուշեցի էր, ունեոր ծնողների զաւակ էր և աւար-

են, որ շատ յաճախի, բայց մանաւանդ արձակուգու-
ների ժամանակ, դպրոցների ամբողջ դասաւաները,
նոյն իսկ ամբողջ դպրոցը անում է կամ վարժա-
պետի, կամ վարժուհու, կամ նոյն իսկ դպրոցի
կառավարչի առաջնորդութեամբ։ Այդ զրօսանք-
ներին քիչ չէ նպաստում, ի հարկէ, և երկրի բը-
տութեան ուժութեան ուժութեան։

Քաղաքի փողոցներում անցնելով ձեզ յաճախ է պատահում հանդիպել երկսեռ մանուկների ահապնի խմբի, ուսուցչի կամ վարժուհու առաջնորդութեամբ, մանկական խորական երգ բարձրացն երգելիս, շատ անգամ փոքրիկ դրօշակներ, և մանկական սրեր ու հրացաններ ձեռքերին. զամբի որ և է դպրոցի դասատոնն է, կամ մի ամբողջ դպրոց, որ դասերից յետոյ զնում է քաղաքից գուրս զրունելու: Երեխաններին տանում են զրունելու ոչ թէ միայն քաղաքի շրջակաները, բայց և մօտակայ զիւղերն ու քաղաքները, մեծ մասամբ ստով, իսկ ամառ ժամանակ դպրոցների աշակերտներն ու աշակերտուհները իրանց մանկալարժների առաջնորդութեամբ ամբողջ ճանապարհորդութիւններ են անում իրանց հայրենիքում, կամ ոտով, կամ երկաթուղով կամ շոգենաւով: Նախ այդ զրունանքները կամ ճանապարհորդութիւնները զեղեցիկ կերպով ազդում են փոքր սերունդի առողջութեան վրա, կազդուրելով նրանց կազմուածքը, բայց սրանից մանուկները այդ զրունանքների ժամանակ շատ անգամ աւելի են սովորում, քան թէ նոյն իսկ դպրոցի չորս պատերում: Մանկավարժը ճանապարհի ժամանակ բացատրում է իր սաններին բնութեան երևոյթները, ճանօթացնում է նրանց իրանց հայրենիքի

տել է իր ուսումը Մօսկվայի Գետրօվսկի ակադէ-գործ
միայում Վերջին ժամանակները նա կառավա-թեր
բութեան յանձնարարութեամբ մի խումբ այլ ե-
րիտասարդների հետ ման է եկել կովկասեան մի գանի գաւառներում, մեր երկրի արքունի գիւղա-գար
ցիների կեանքը հետազօտելու նպասակով և ար-դէն պատրաստում էր մի գրուածք իր արած հե-
տազօտթիւնների մասին: Անձնասապանութեան
բուն պատճառը յայտնի չէ, միայն յայտնի է որ
անձնասապանութեան նախընթաց օրը հանգուցեալը
սաստիկ վրդովված զրութեան մէջ էր, որովհետեւ
այն օրը, Տէր-Մովսէսեանց, որ հաշում էր կա-
ռավարչական ծառայութեան մէջ, իր մեծաւորից
յանդիմանութիւն էր ստացել իր մասնագիտու-
թեան վերաբերեալ մի աշխատանքի համար, որ
յանձն էր առել կատարելու: Յունվարի 21-ին
հանգուցեալը մտնելով ժամը 10-ին առաւտեան
վերև յիշած հիւրանոցը, պատուիրել էր իր համար
մի բաժակ թէյ և անմիջապէս առանձնանալով մի
այլ սենեակ, արձակեց իր վրա բէվօլվէրը, որի գըն-
տակը ուղղակի դիմաւ ճակատին: Մահը յանկար-
ծական էր: Բէվօլվէրի արձակման ձայնը լսելով,
հիւրանոցում ներկայ գտնվածները անմիջապէս
շտապեցին այնաեղ, որտեղից լսվեցաւ ձայնը,
բայց գտան երիտասարդին արդէն անչնչացած:
Նրա մօտ գտնվեցաւ մի տուսակ, որի վրա հան-
գուցեալը զրել էր ոռուսերէն լեզուով: «Խնդրում
եմ ոչ ոքին չը մնղադրել իմ մահվան առիթով»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՀՈՒՐԵՐ

— Բալկանեան թերակղզու վրա վերջապէս մի կղզի հաստատուն դրութիւն ստեղծելու հարցը, ասում կան է «Новое Время» լրագիրը, աւելի և աւելի զբաղեցնում է արևմտեան հրապարակախօսներին և գիտնականներին, մանաւանդ գերմանացիներին: Այդ հարցը մանրամասն քննադատութեան է ենթարկում Մինչիւնի «Allgemeine Zeitung» լրագիր մէջ յայտնի պրօֆէսօր Լորէնց Ֆօն-Շաէնը: Բալկանեան պետութիւնների դաշնակցութեան զերմեռանդ կուսակից պրօֆէսօրը կրկին քարոզում է իր միրած գաղափարը և աշխատում է ապացուցանել, որ այդ գաղափարի իրագործումն միակ

պատմութեան հետ և այլն: Ծովակի վրա շոգե-
նաւով անցնելով, նա բացատրում է նրանց շոգե-
մեքենաների կազմակերպութիւնը, կամ ջրի յատ-
կութիւնը, կամ մատնացոյց անելով ծովակի ա-
փին գտնվող մի որ և է պատմական շնութեան,
արձանի վրա, անմիջապէս պատմում է մանուկ-
ներին այդ հսութեան հետ կապ ունեցող այս
կամ այն սպատմական անցքը, այդպիսով ծանօթաց-
նելով մանուկներին հայրենական պատմութեան
հետ: Դաշտերով և անտառներով անցնելով վար-
ժապետը հաւաքել է տալիս աշակերտներին. բոյ-
սերի, ծաղկեների այլ և այլ տեսակներ, բացատ-
րում է նրանց բոյսերի այս ու այն յատկութիւն-
ները, սովորեցնելով նրանց բոյսերի, ծաղկեների,
ծառերի, նոյնապէս պատահող կենդանիների, ձկնե-
րի անունները, այդպիսով ծանօթացնելով իր
փոքրիկ ընկերներին ոչ թէ միայն բուսաբանու-
թեան ու կենդանաբանութեան տարրական սկըզ-
բունքների հետ, բայց և հայրենական ֆառնայի
և ֆլորայի հետ:

| ԵՎԵՍՈՐԻԱՅԻ դպրոցները, ինչպէս ասացի, մեծ
ուշադրութիւն են դարձնում մանուկների Փիզիկա-
կան կանօնաւոր դարդացման վրա: Գիմնաստի-
կան ամեն դպրոցում, մանաւանդ միջնակարգ
դպրոցներում, կանօնաւոր դասաւութեան անհրա-
ժեշտ առարկաներից մէկն է: Իւրաքանչիւր միջ-
նակարգ դպրոցին կից շնոված է ահազին դահլիճ, Turnhalle, որտեղ պատանիները նշանակված ժա-
մերին կանօնաւոր և սիստեմական կերպով մար-
մնամարզութեամբ են պարապում: Բացի սրանից
դպրոցներում մատրած են ոյժը զարդացնող այլ և
այլ խաղեր, նման հին յունական խաղերին՝

նական միջոց է վերջ զնելու բալկանեան սկզբու այժմեան խաօսական դրութեանը, որը ներգործութիւն ունի ամբողջ Եւրոպայի քառական կեանքի վրա: Բալկանեան թերակղու կատարվող այժմեան անցքերը Ֆօն-Շտէյնի ար ապացոյցներ են, որ այդ ազգերը միամակ հասել են այն ինքնաճանաչութեանը, թէ կազմում են մի և նոյն օրդանիղմի մասեն և այդ պատճառով կոչված են ապրել ընդուր կեանքով: Պրօֆէսօր Ֆօն-Շտէյնը կարծիք այտնում, թէ Եւրոպայի պարտաւորութիւնն է ստել այդ պատճառական պրօցէսին, և ոչ թէ գարել դրան, ինչպէս որ նա մինչև այսօր ամ է: Նրա կարծիքով, զիսաւոր պատճառը, ինչու Եւրոպան մինչև այժմ չէ կարողացել գործել իր այդ լինդիրը, այն է, որ արևմըն պետութիւնների, առաւելապէս Անգլիայի և նախիայի ձգումները բալկանեան ազգերի վերութեամբ կատարելապէս տարբերվում են ելեան պետութիւնների, այսինքն՝ Ռուսաստանուրո-Ունգարիայի և Գերմանիայի ձգումնեց: Անգլիան և Ֆրանսիան բալկանեան թերաւու վրա միայն առևտրա-քաղաքական նպատակումնեն: Նրանց ամբողջ քաղաքականութեան ստակն է ապահովել բամբակեղէն գործուածի և «article de Paris» վաճառահանութիւնը և թոյլ տալ արևելեան պետութիւններին մրցել ունց հետ: Անգլիան և Ֆրանսիան սրտով կատ-

ս չս բավկառան պատութեաւորը, և առաջ ա-
սրտակցութիւնը չի էլ կարող լինել: Սակայն
այդպիսի սրտակցութիւն գոյութիւն ունի ա-
յսքան պետութիւնների հետ: Այդ բանը կա-
րելապէս զգում և խոսապահում են իրանք
կանեան ժողովուրդները: Անգլիային և Ֆրան-
սիային շատ ձեռնտու է բավկանեան պետութիւն-
ի մէջ ծագած երկպառակութիւնը, որով և
պատրիում է նրանց վարմունքը Կ. Պօլարի կօն-
քնցիայում: Արեւելեան պետութիւնները, ընդհա-
ւակն, ցանկանում են հանգստութիւնը պահպանել
կանեան թերակղզու վրա, բայց որովհետև status
մերուանոնեւ անկառիկի է եռնում, արդ սրաւ-

ւով և Սոր Բալկան» յօդուածի հեղինակը թանձանքով խորհուրդ է տալի այդ պետութիւնին միմեանց մէջ մի այնպիսի համաձայնուն կայացնել, որի չնորհուի մի կողմից թերաբն կարողանար ապրել իր բնական օրգանական գործութիւնը արևելք արևելեան պետութիւնների ազգութիւնը: Այդ բանի համար ամենից լաւ է ողջել Բալկանեան փէղերացիան (դաշնակցութեանը) արևելեան պետութիւնների հովանաւորուան ներքոյ: Յօդուածի հեղինակը համոզված է, այդ ամենից աւելի նպատակաշարմար միջոց երջ դնելու Բալկանեան թերակղզու վրա եղած պառակութիւններին և հաւասարակշռութիւնը աւելանդնելու Արևելքի և Եւրոպայի արևմուտքի:

ԽԱՐԴԱՐ ՀՈՒՐԵՐ

Ճեղի կերպով տօնելու: Հեղվերդի Պահացը ավագնաշնորհ է հին ամրոցի ներքնատանը դարնվում է մի շահին և ահազին մեծութեան տակառ, որի վրա բարձրանալու համար շինված է սանդուխ իսկ տակառի վերնաւմ շինված է փայտեայ յտակ պատշգամբներով, որի վրա նոյն իսկ պագալ կարելի է: Տակառը կարող է պարունակի իր մէջ 283,200 շիշ գինի: Համալսարանի յօրեանի օրը քաղաքը դիտաւորութիւն ունի լցնայդ տակառը ամենալընտիր զինվորվ և անվաճիւրասիրել այդ զինիով՝ յօրելեանին մասնակց բոլոր հիւրերին:

ԹԱՐՄ ՀՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼԻՍ. (Վարսայի վրայով.) 22 յունվարին Թուրք-բոլգարական համաձայնութեան հիմնական պայմանները հետևեալներն են. 1. Խխան Ալեքսանդրը կը նշանակվի 5. տարով Արևելքան Շումէլիայի գլխաւոր կառավարիչ, այնպէս որ պայմանաժամը լրանալուց յետոյ, կարող լինի նորից ընտրվել: 2. Տաճկաստանը յետ է ստանում Յօվոսի և Վիրջալի նահանգների մահմեղական գիւղերը, որոնց փոխարէն հրաժարվում է Բալկանը տիրելու իրաւունքից: 3. Երկու գաւառների պատերազմական կօնտիմութենածը ենթարկվում է սուլթանի իրաւասութեանը Տաճկաստանի եւրոպական երկիրները պաշտպանելու համար, և պատերազմական մասերի գլխաւոր կառավարութիւնը կը յանձնվի տաճիկ օֆիցերներին: 4. Հարկաւոր դէպքում առաջական զօրքը կը պաշտպանէ Յումելիան և Բուլգարիան և զօրքի հրամանատարը կը լինի Խխան Ալեքսանդրը: 5. Թուրք-Բուլգարական յանձնաժողովը կը հասաքվի Ֆիլիպպօպօլում, Արևելքան Յումելիայի սահմանադրութեան մէջ քանի մի փոփոխութիւններ անելու համար: 6. Բէրլինի դաշնադրութեան որոշմունքները կը մնան անփոփոխ: Այս համաձայնութիւնը, որ ներկայացված էր սուլթանի հաստատութեանը, յետ է ուղարկված Բ. Դրանը փոփոխութիւններով: Սակայն ենթադրում են, որ համաձայնութիւնը շուտով կը կայանայ: Տաճիկ զօրքերի մեծ մասը, որ գտնվում է Ալբանիայում և սերբ-բուլգարական սահմանների վրա, և ենուոնանաւում է Քունաստանի սահմանի վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԽԹ, 23 յունվարի: Երեկ ներկայացաւ թագաւոր կայսրին նոր գեներալ-մայօրի աստիճան ստացած յայտնի ճանապարհորդ Պրժեկալսկին: Երեկ Զերնոօգօրիայի իշխանը հրաւիրված էր ընտանեկան հայկեռոյթին Անդրչուլ պալատում: Իշխանի բնակութեան տեղը նշանակվածէ Զմերային պալատում: Իշխանի հետ ժամանեցին այս տեղ Զերնոօգօրիայի՝ մեր գործակալ—նախարար Արքիրազորուզն և իշխանի ֆինանսական դիրեկտոր Մատիանօվիչը: «Journal de st.-Petersbourg բոլորվին հերթում է Փարիզի լրագիրների այն լուրերը, իբր թէ Գետերբուրգում յայտնվել է նիհիշխաների նոր դաւադրութիւնը, ոստիկանութիւնը ձեռքակալել է վրդրվեցոցիչ բովանդակութիւնը ունեցող թզմեր և յեղափոխական էմքը եմաներ, և իբր թէ շատերին էլ բռնել են և այն:

ԼՕՆԴՈՆ, 23 յունվարի: «Քէյտէրի գործակալութիւնը» հաղորդում է որ մինխատրութեան մէջ նշանակվել են վերջնականապէս Գլադուոնը գանձարանի առաջին լորդ. Հերցէլ լորդ Կանցլեր, Սպէնսէրը—գաղոնի սորոհրդինախագահ, Զայլդէրս ներքին գործերի մինխատր, Թօգբերին—արտաքին գործոց նախարար, Գրէնվիլը—գաղթականութեան նախարար, Մունդէլա—գաճառականութեան, Քիմբրլէյ—Հոդկական գործոց, Բանէրման—պատերազմական, Բայպլն—ծովային. Հարկօրթ—կանցլեր գանձարանի, Ջէմբրլէն—տեղական կառավարութեան նախագահ,

ռավարութիւնները մնձ խնամք են տանում և
այսպիսի մասուկների համար օրինակելի ջոկ դըպ-
րոցներ հիմնելով և նրանց իրանց պետական հաշ-
տով պահելով, որոնք զրկված են քնական այս
կամ այն յատկութիւնից, օրինակ երկու մեռի խոռվ
ու մունջ կամ կոյր մասուկների համար, կամ վեր-
ջապէս կրետին ու բժիշտամիտ մասուկների համար
դպրոցներ։ Օրինակ Ցիւրիխի կանտոնային դպրոցը
խոռվ ու մունջերի համար այն աստիճան օրինա-
կելի է, որ յայտնի է ամբողջ Եւրոպայում։ Այդ-
տեղ խոռվ ու մունջերին սովորեցնում են մի ա-
ռանձին մեթօդայով խօսել։ Նրանք թէև շատ
խոռվ ձայնով են խօսում, բայց այնու ամենայնիւ-
խօսում են, չը նայելով որ իրանք չեն լսում ի-
րանց ձայնի հնչիւնը։ Ես առիթ ունեցայ այցելել
այդ դպրոցը։ Կառավարիչը ինձ ներկայացրեց
ամբողջ դպրոցի բարձր դասաւանը, որտեղ խա-
ռըն նատած էին խոռվ ու մունջ թէ օրիորդներ և
թէ երիտասարդներ, իմ ներկայութեամբ մի քանի
հարցեր առաջարկեց խոռվ ու մունջերին, խնդրեց
ինձ էլ նրանց մի քանի հարցեր առաջարկել և
ես լսեցի նրանց թէև խոռվ և անախորժ ձայնե-
րով արտասանած, բայց խելացի և սուր պատաս-
խանները։ Հարցը ըմբռնելու համար այդ խոռվ
ու մունջերը թէև ոչինչ չեն լսում, բայց մնձ ու-
շագրութեամբ նայում են հարցողի բերանի շարժ-
մունքներին և բերանի այս ու այն շարժմունքից,
որ նրանց համար պատկերացնում են տառերի
կամ հաշիւնների ձեր, հասկանալով հարցմունքի ի-
մաստը, անմիջապէս պատասխան են տալիս հարց-
մունքին։

անգամ շվեյցարական այս զամ այս քաղաքամ զիւլը, առանց ոչ ոքին հարցնելու թէ ակամ այն հոյակապ, գեղեցիկ շինութիւնը տեսակ շինութիւն է, առաջին հայեացըից արդ գուշակել թէ դա անպատճառ դպրոց պէտք է նի. և հարցնելուց յետոյ ծմարիտ իմացել եմ չեմ սխալիկ, թէ դա դպրոց է: Շվեյցարացինեայնքան մեծ նշանակութիւն են տալիս նոր ըրմանդի ուսման գործին, որ կանտօնի, քաղաքի, գով կամ համայնքի ամենագեղեցիկ, ամենահոյակա շինութիւնները միշտ յատկացնում են դպրոցները Տեսնում եք մի փառաւոր շինութիւն, քաղա կամ թաղի ամենաաչքի ընկնող տեղում, շանգամ մի բարձրութեան, մի բլրի վրա դպած, շրջապատված այգիով, առջեր մի մեծ գոտավայր, մի արձակ տեղ, — դա անպատճառ դը րոց է: Շվեյցարացին աւելի լաւ կը համարի ին նեղ բնակարանում ապրել, բայց ոչինչ չի ինս իր համայնքի մէջ ամենափառաւոր, ամեն տեսն յարմարութիւններով դպրոց ունենալ, որին յա կացնում է թաղի ամենաաչքի ընկնող գիւղը ամենաառողջարար տեղը: Դպրոցը շվեյցարաց շվեյցարական համայնքի, քաղաքի կամ կանտա ամենամեծ փառքն ու պարձանքն է:

Բացի համայնական և կանտօնային դպրոցներ բազմաթիւ են Շվեյցարիայի լուրջանչիւր տեղու մասնաւոր դպրոցներ, թէ մանկական պարտներ, թէ տարրական ու միջնակարգ դպրոցն թէ պանսիօններ, և թէ մասնագիտական մասն տոր դպրոցներ, ինչպէս երգեցողութեան, երա տուրթեան, այլ և այլ արուեստների, նկարչութե դպրոցներ:

